

սակետով, և կը կարծեմ թէ պատմականօրէն ուսումնասիրութեամբ կարելի պիտի ըլլայ ատոնց և կամ որքէջ աղանդներու մէջ, որ «կարելի է 10 կամ 11 տեսակ, հաշուել», գտնել Արևորդիններու և կամ Թոնդրոպկեցիներու ժառանգներ, որ դարբերու ընթացքին եկեր են և այդ կերպ կրօնի են յանգրու խառնած քրիստոնէական հնդկա-կան — մահմէական կրօններն իրարու, ինչ պէտ նաև մանիքեցուց միացորդներ՝ թէ կ'ուզենք անելի առաջ երթալ: Ըսածս լոկ կարծիք մ'է:

Գիտական բաժնի մէջ մասնաւորապէս կ'ուսումնասիրուին բժշկական կոորներ, յատկա-ցուած և փորձուած հայկական հիւանդանոցներուն մէջ, որով անկէ մասնական շահեկանու-թիւն մը զգեցած մեզ համար: Այսպէս Հ. Քեյէկ «Արմենիկ անոդոքիլի յօդախախտման մա-սին»: Բժ. Գր. Արեւեան «Հայ կնոջ կոնքը և ծննդի տևողութիւնը»: Բժ. Արշ. Յակոբեան «Հիստորիկ Մոտոլոգի և պարպիզների երկու-դէպքեր»: Բժ. Ե. Գալանթարեանի հետաքրքրա-կան երկը «Հայաստանի ազգաբնակչութեան Հէյմլինտոֆաունայի ուսումնասիրութիւնը»:

Կան նաև շահեկան յօդուածներ Հայաստանի տնկազորութեան մասին, ինչպէս Պ. Քալանթարեանի «Բաւմբակեան երկու ետր քակտե-րիողներ Հայաստանում»: Մ. Թումանեանի «Հաջարի ձակնդեղի մշակութեան հետազոտ-մանը Հայաստանում» և այլն:

Ընդհանուր առմամբ ոչ այնքան խոր ուսում-նասիրութեան մը երևոյթը կու տան՝ որքան դպրոցական դասախօսութեան, սակայն հարկ է ըսել որ ինքնաշխատութեան մեծ ճիգ մը կայ, ներքին կենսունակ ոչ մը Հայաստանի մէջ զար-գացնելու տեղական ինքնուրոյն մի գիտական բարձր և նոր միջնուրու: Չեմ ուզեր ծածկել և այն պակասը՝ որ կը տեսնուի գիտական բաժնին մէջ, որ է եւրոպական արդի յառաջադիմութեան, և նմանօրինակ պարբերականներու անձնաօթու-թիւնը, որով և բազմակողմանի ուսումնասիրու-թեան էական մէկ տարր մը:

Բաւական յօդեցուցիչ է նաև Տեղեկագրին մէջ ընթերցումը, եւրոպական գիտական եզրեւ-րու մի տարօրինակօրէն յաճախ կիրարկումը և հնչափոխութիւնը, ապահով եմ որ Հայաստան-ցին՝ որոնք համար անշուշտ զիտաւորապէս չա-բազրուած են՝ բան չի հասկնար:

Յօդուածներուն վերջը եւրոպական մի ու է լեզուով կամ ամբողջական թարգմանութիւնը կայ, և կամ մի փոքրիկ ամփոփում էական մասին: Հասնելով «ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ» վերջը՝ մենք

ընդհանրապէս կը գնահատենք բոլոր աշխատու-թիւնը, սակայն ոչ յօդուածագիրներէն ոմանց արհամարհող պարծենկոտութեան չափ. և կը փափաքեմք նորանոք յաջողութիւններ, մասնա-ւանդ վերցնելով լեզուի և այլ զաղափարներու ոչ ազգային խոշորոտները գիտական Հայաս-տանէն, ձեռք ձեռքի տուած բնիկ և տարագիր Հայ եղբայրներ միանալու սրբազան ազգու-թեան մէջ, որ մեր դարուր գաղափարն է:

Հ. Վ. ՅԱՎԱՆԻՍՅԱՆ

Զ Ա Ի Ե Շ Տ

ԱՊՈՒ ԳԱՍԵՄԻՆ ՀՈՂԱԹՈՓՆԵՐԸ

Ա Ն Ց Ի Ն Ք

ԱՊՈՒ ԳԱՍԵՄ, ազաւ և հարուստ պատուաւոր. ՄԱՀՏԻ ՍԻՒԼԷՑՄԱՆ, ազաւ և հարուստ անպառօն. ԱԼԻ ՄՈՒՍԹԱՌԱՅԻՆ, դառն աւանդ. ՀԱՅՏԱՐ ԶԵՔԻ ԲԵԿ, փեսայ Ազու Գասեմի. ՕՍՄԱՆ, ծառայ Ազու Գասեմի, պատանեակ. ՔԵՄԱԼ, ծառայ Հայտար Զէքի, պատանի. ՀԻՒՍԵԻՆ և ՆՈՒՍՈՒՅԻ, դառն շաւաշներ. ՓԱՊՈՒՃՃԻ ՄՈՒՍԱ, կողակաւոր. ՀԱՋԻ ՌԻՒՍԵՄ. ՄՈՒՆԵՏԻԿ ՄԸ. ՔԱՆԻ ՄԸ ԻԱՆՈՒԹՊԱՆՆԵՐ. ՔԱՆԻ ՄԸ ԹՈՒՐԲ ԼԱՄՈՒԿՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԻ:

Գորոգողութիւնը կը կատարուի բարձր աւանի մը մէջ,

ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը կը մերկայացնէ աւանի շուկայ մը, երկու կողմէն կարգ մը խամութմերով, որոնց մէջ է նաև փապուճիկ Մուսայիմը, որ կ'աշխատի մորեղջիւտ աշխարհի ու ծամը զոյգ մը հողա-թափմեր. Ժողովուրդը խամութիւններու առջէ կը շարժի ու վաճառք կը զմեծ, Մուսայի խամու-թիմ առջէ կայմած է Օսման.

Ա. Խանուրպան (բոլոր լատինի մը). — Հե-ռացիք, մէկդի կորսուէ դատարկապարտ. ու-րիշ անգամ ալ այդպէս որդորմուկ ձեռով մօ-տեցար խամութիւն, տուիք մը լուցկի գնեցիք, բայց տուիք մը ծխախոտ ալ զողջար փախու-ցիր...

լամուկ. — Զէ, աղա, ես չէի...

Ա. խանութպան. — Կորսուէ՛ կ'ըսեմ, քեզի պէս սրիկայ, ապա թէ ոչ: (Կր քարթրացնէ խառապանն հարստածուր. լամուկը ժողարժու անէրով կը փախչի կը խառնուի ամբոխին մէջ):

Բ. խանութպան. — Ո՛ւր էր թէ խարազանդ իշնար քիթին ու բերիին, այդ լալոտն երէկ ինձմէն ալ զնիւռ մօտեցաւ և սպառն մը թուող տարաւ:

Ժողովրդին վեկեր. — Հա՛, հա՛, հա՛... յաշող առուստուր բրեր ես:

Կեր մը. — Յանցանքն այդ լալոտին ու նման, ներունը չէ. անոնց սովորեցնողը պէտք է խառապանը:

Ա. խանութպան. — Ո՛վ է այդ գողերուն պառուստուր ուսուցիչը:

Կերը. — Ո՛վ, Մահտի Սիւլէյմանը, այն հուշակատր զգուշի ազահը՝ որ այդ լալոտներուն գողնալ կը սովորեցնէ, որպէս զի տանին իրեն աման ծախեն:

Բ. խանութպան. — Պէտք է իմացընել Ղատիին՝ որ այդ գարշիկ հարուստը լաւ մը պատժէ և մեր աւանէն դուրս վնտէ:

Գ. խանութպան (յաճախողի մը). — Ապուր գաղմն եղար, ի՛նչ եղար, որ քսան փարայի համար աղջակ տակնուվրայ կ'ըլլայ. կամ ըսած գնովս գնէ, կամ ետ քաշուէ. ոչ ուրիշ ներուն քարգէջ եղիր, ոչ ալ ժամանակս վատնել տուր. փարա մ'ալ ըսած զինէս վար չեմ իշնար. հասկըցար:

Օսման. — Աման, Մուսա ջան, կ'աղաչեմ չուսով լմընցուր. գիտե՛ս քանի ժամ կ'ընէ որ հոս տնկուած կը սպասեմ՝ որ սա անիծած հողաթափները կարկրտես լնցնես:

Մուսա. — Ի՛նչ ընեմ, ջանքմ, հոգիդ չ'իլլեր, քիչ մ'աւելի համբերէ. չե՛ս տեսներ որ առուստընէ մինչև հիմայ կ'աշխատեմ. չեմ գիտեր որ կողմն սասեղ գարնեմ. հինգ տարի կ'ընէ որ կարկտան կարկտանի ու տակ տակի վրայ զննելով այս անճոռնի հողաթափներն հոգիս կը հանեն... Անիծած ըլլայ ասոնց կծծի տիւրովէն առնելիք փարա:

Օսման. — Մի՛ նեղանար, Մուսա. ես համբերութիւն ունիմ, բայց...

Մուսա. — Բայց աղաղ չունի, գիտե՛մ... Եւ սակայն Ապուր Գասըմի ծառայէն դեռ աւելի համբերութիւն կը պահանջուի. կ'երևայ թէ դուն դեռ նոր անոր ծառայութեան մտեր ես, Օսման:

Օսման. — Շատ ալ նոր չէ... կեցիր... այսօր կ'ընէ 86 որ և 85 գրէի, եօթը ժամ և ինն ու կէս վայրկեան (ծամագոյցը նայելով):

Խանութպանները. — Հա՛, հա՛, հա՛ (քրքիթ):

Մուսա. — Ժամերն ու վայրկեաններն ալ կը հաշուէ... հէ՛, հէ՛, հէ՛:

Օսման. — Հապա ի՛նչ կարծես. եթէ դուն իմ տեղս ըլլայիր՝ կարծեմ որպէսներն ալ պիտի հաշուէիր, իմանալու համար թէ ամսագրուին երբ պիտի հասնի որ...

Մուսա. — Ի՛նչ որ է, բաւական մեծ համբեր

ութիւն ունիս եղբ, տղայ. բնաւ ծառայ մը շաբաթէ կամ շատ շատ երկու շաբաթէ աւելի մնացած չէ Ապուր Գասըմին քով. դուն երեք ամիսը լնցնելու մօտ ես... է՛վալլաւ:

Մուսնետիկը (քրքիթաւարտութեամբ ներս մտնելով, յետոյ շուկային մէջ կանգնած). — Ասանի բարձրաստի դատիին Ալի Մուսթաֆա էֆէն, տիի հրամանն է. «Այս աւանիս մէջ հասա, բակաց հիւանդանոց մը պիտի շինուի. ամէն մէկն իր կարողութեան շափով պէտք է ամ. սակաւ տուրք մը վճարէ վաղուրնէ սկսած, մինչև որ հիւանդանոցին շինութիւնն աւարտի: Տուրքերը դատի էֆէնտիին գործակաւ տարը՝ Հայտար Զէքի բէկը պիտի հաւաքէ... կեցցէ՛ բարեգործ մեր դատի էֆէնտին»:

Ամէնքը. — Կեցցէ՛, կեցցէ՛... (Մուսնետիկը քրքիթաւարտելով կը մեկնի):

Մուսա (Օսմանին). — «Ամէն մէկն իր կարողութեան շափով», լսեցիր... Աղայի՛ Ապուր Գասըմին աչքը լոյս... Մեր խելայի դատին գիտէ թէ որ խաղողն աւելի զինի կուտայ, և ճգմելու արդուստին մէջ շատ վարպետ է:

Քեմալ (ներս մտնելով). — Ի՛, Օսման, ի՛նչ կ'ընես հոս. լաւ որ քեզի հանգիպեցայ. աղաղ անհամբեր քեզի կը սպասէ, մանաւանդ թէ փապուհներուն կը սպասէ:

Օսման. — Ի՛, բաւական չէ՞ ասոնց զիս ծաղրելը, դուն ալ վրայ հասար, Քէմալ, որ զիս աւելի ծաղրի նիւթ դարձնես:

Քեմալ. — Զեքէ ծաղրի նիւթ ընել, Օսման ջան. դուն լաւ գիտես թէ զեքէ որչափ կը սիրեմ և որչափ ալ վրադ կը մեղեմ... ղծախաղ տղայ, անբերեն փախար՝ կարկուտի բռնուեցար:

Օսման. — Զէ, Քէմալ ջան, չէ. ըսէ՛ մառաւանդ՝ կարկուտէն ազատեցայ, բայց անձերի բռնուեցայ: Ապուր Գասըմը որչափ ալ ազահ մէկն է, որչափ ալ փարա մը գրպանէն հանած ասանց՝ կարծես հոգին ալ կուրծքէն կը հանէ, բայց Մահտի Սիւլէյմանին հետ բաղդատելով՝ անհամբաւտ աւելի բարեսիրտ տապաւնուար է:

Քեմալ. — Գիտե՛մ որ այն զգուշի Մահտիին քովն ալ շաբաթ մը ծառայութիւն երկր:

Օսման. — Զէտփերիթիւն ըսէ՛ ոչ թէ ծառայութիւն: Արտուրնէ մինչև իրիկուն ուրիշ գործ չունէի՝ բայց եթէ զամբիղ մը ձեռքս՝ հետք փողոցէ փողոց, շուկայէ շուկաք ետեւէն քաշել: Ի՛նչ որ ասդէս անդին նետուած աղտոտ կեղտոտ քուրջեր և տներու ալուքներու հետ դուրս նետուած փայտի մանրուքներ, հինցած կաշիի փերթեր, սպառնի կոտորներ, կոտորած սանրեր, ժանգոտած զամեր, ծոմկած երկաթներն ու թիթեղներ, փտուած պտուղներ և ուրիշ ասոնց նման կեղտոտութիւններ կը գտնուի՝ կը ժողվէր ու զամբիղին մէջը եւ աւել, ուսկիւր՝ կարծեմ գարշաւտութիւնը միայն խեղճ քիթս կրնար բացատրել թէ ի՛նչ էր... Իսկ ինձի տուած կերակուրը աւելի շան լակէր քան թէ Լուսիւռ Բան Զոդմաղայ. փառ

խայ քովէն, իրեն թողլով շաբթուան մը վարձաւ ալ, որ եթէ ուզէի ալ լաւ գիտեմ որ պիտի չտար, ըսելով որ հետո ամուսնան մը ծառայութեան դաշինք դրեր էր և ոչ թէ շաբթուան, ինչպէս լսեցի որ ըրեր էր այն բաններուն ալ՝ որ առանց զինքը հանչնալու՝ իր ծառայութեան մէջ մտնելու դժբախտութիւնն ունեցեր էին՝ ինծի պէս օտարական ըլլալով և ինծի պէս ալ ամիր չլսացած՝ ստիպուեր էին փախչելու քովէն... Ինչ ընեմ, Աստուած ինծի նման ազգաստ և որը տղուն հակադէմ այս գիրքը գրեր է եղեր։

Քեմալ. — Ուրեմն հիմայ Ապու Գասըմին քով գո՞հ ես։

Օսման. — Կատակ կ'ընես, Քեմալ. ազգանք մը ծառաներէն ո՞վ կրնայ գո՞հ ըլլալ՝ որ ես ալ ըլլամ, բայց թէ անեղծ՝ որ ճարտար եմ ազա-
հէն ալ գողնալու. բայց ես այդպիսի ճարտար-
րութիւն ոչ ունիմ և ոչ ալ կ'ուզեմ ունենալ։
Քեմալ. — Օսման, գուն շատ աստուածավախ
ու պատուաւոր տղայ մ'ես։

Օսման. — Բայց այդ արտողաններդ և իմ բոլոր բարոյական ծիրաքեր հրաշք մը չեն կրնար ընել՝ որ երբեմն մի միայն չըրով ու քամիով լեցուն փորս՝ ամպերու պէս չզոռոզողայ, մինչև որ վերջնապէս ամսադիւրիս՝ երկայ հառաչանք-
ներէ վերջը ազաս վարձքս զգորցէն չհանէ չտայ՝ որ անծառայութիւն անցնենեմ։

Քեմալ. — Ամսականդ ամբողջապէս կը վճարե՞ս Օսման. — Հիտաակն ըսելով՝ խոտաացածէն բան մ'ալ աւելի կը վճարէ, ինչիւն ընելովդ գուցէ՝ որ առանձն շատ քիչ է՝ ըրած հաւատարմի ծառայութեան փոխարէն։ Քեմալ, կ'ըսեմ դարձեալ, տէրս քու տորթը Հայտարար բէկի պէս առատամեծն մէկը չէ, բայց գէշ մարդ ալ չէ. ազգան մ'է, և ոչ թէ Մահմուդի պէս անխիղճ, անպատիւ, կեղտոտ ու զոռելի ազան մը։ Եթէ գտնուիր մէկը որ Գասըմի իր այս ազգականեան պակասութենէն ազատէր՝ իրաւ կ'ըսեմ տէրս շատ սիրելի և ազնիւ անձ. նաւորութիւն մը կ'ըլլար։

Մուսա. — Հա՛, հա՛, հա՛. տղայ, եթէ գտնուէր մէկը որ զինքն համոզէր՝ թէ այս այլանդակ հողաթափներն ալ գործածուելուն բան չեն՝ զիս ալ ստել վերջ գանձոք կարկռուելէ կ'ազա-
տէր... Ահա, վերջնապէս լնացաւ. ուրիշ ինը կարկռան ալ վրան աւելցուցիր, քանի մ'անա անեղ կտորիկով... Ամսթ չէ՛ իրեն՝ որ այս ծիծաղելի հողաթափներով պտտել, մինչդեռ այնքան մեծ կայտաւծներու և քանի մը տու-
ներու տէր է, և ո՞ր գիտէ թէ որչափ ալ պահ-
ծու ոսկիներ ունի... Ա՛, ա՛ն տար, և ըսէ՛ իրեն որ խիղճ ունենայ այս անգամին հետ նախընթաց երկու անգամուան նորոգութեանն վարձքն ալ ամբողջապէս շուտով վճարէ, ա-
պա թէ ոչ՝ լաւ գիտնայ որ կ'երթամ դատի թէ՛ ինքնիկն գանգատելու։ Պիտի ըսես իրեն ըսածներս՝ թէ ակամչիդ ետեղ պիտի ձգես։
Օսման. — Կ'ըսեմ, Մուսա շան, խօսք կու տամ ըսելու, բաւական է որ արդաս ըսածս պկանջին ետեղ չձգէ. (կ'առնէ հողաքարս)...

րը)... Ո՛հ, սալլակ մը պէտք է այս անձոնի ծանրութիւնը մինչև տուն տանելու համար... (Քուրկնոտի փողոցը դիտելով). Է՛հ, ա՛նգ դէպ ի հոս կու գայ Մահմուդ Սիւլէյմանը, փախ-
չիմ որ զիս տեսնէ. (խորս կը կապէ հողա-
քարս) Կ'ըսեմ, մէկը մէկ ուսեմ, միայն միջոց ու-
սեմ կ'ախա՛մ՝ կը փոքարայ, դռնաւ կ'եղի։

Քեմալ. — Խեղճ Օսման... Լաւագոյն բախտի արժանի է այդ ազնիւ տղան... տես՛ք թէ ինչպէս կը վախէ Մահմուդն... զինքը շատ չարարած պիտի ըլլայ զարբիւր Մահմուդն... անոր կրածներուն վրէժն աննշու համար կ'ուզեմ խաղ մը խաղալ այդ զոռելի ազգահին զիւտուն... (խանդարապաններուն) Հարկ եղած տեղը կ'օգոյնէ՞ք ինծի։

Խանդարապաններ. — Դատ լաւ... այո՛, այո՛... յօտարութեամբ... (ժողովորդը մի առ մի կը քաշուի) տեսարանէն մեկնելով. կը մնան յորս հինգ շակոտներ, որոնց ապակեակն թանցր մը կը փախսայ Քեմալ և յետոյ կը պանծարտի խանդարապանէն մեկուն կանակը)։

Լաւոյններ. — Մենք կենալք հոս Քեմալին օգնենք ու գուարճանալք։

Մահմուդ (ներս կը մտնէ, աղտոտ հագուստով, թոյլ, գասիւղ մը կանկնի և գաւազան մը ձեռքը՝ որոնք ծայրը փերքարապէս ձանկ մը կայ. 40 տարեկանի դէմքով, տղեղ, բար-
ձրահասակ, կեանք, խաղաղ ձայնով, բար-
կացտու բնուորոտարեամբ)։

Լակոյններ (Մահմուդն ցուցնելով իրարոս՝ կը սկսին խնայապահեմ մարդի, փոխել ի փոխ գոչ-
ցելով ու չորքիւղով և մահի հանելով ու գա-
նազան ձեռք ընելով ազանի կատողեցնելու համար) Տես՛ք, տես՛ք ազգան... հա՛, հա՛, հա՛... չեօփնե՞ք... պտտո՞ւք... Ինչ լօզիկ... Ինչ զլխարկ... մեր փիլաի օտնն ատէ՛ք աւելի եղտո՛ւ չէ... Հապա կոչիկներս... աղբիւնէ գտեր, տես՛ք անցուցեր է... Եւ հարուստ է... պանծու շատ ոսկի ունի... իսկ ինքը մկներու հետ նկուղի մը մէջ կը բնակի... ո՞վ գիտէ թէ միայն կրծածները չ'ուտեր... կարելի է մկները կը բռնէ կ'ուտէ... Գարշելի՛ ազան... կեղտոտ Մահմուդ, թիւ՛հ քօքի... զգուշե՛ք Սիւ-
լէյման, թիւ՛հ, գոմի կաշի երեսը... (Միեւ-
րեա Մահմուդ կատարած մէջ մը մէկուն, մէջ մը միւսին ետեկն կը վազէ շակոտները ծծնելու համար) անկը ձարպիկորտեամբ դէտուսէն կը փախչողին վերի գոտած խօսքերն ըսե-
լով՝ միշտ, ու չորքիւղներով տեսարանէն կը հեռանան։ Այդ խաւանդորեան միջոց՝ խա-
նդարապաններն ալ ձեւացնելով իրր թէ լակոյն-
ներուն կը սաստեմ՝ ընդհակառակէ Մահմուդի գլխուն կը նետեն գանգաւաք իրեք, զոր օրի-
նակ քոյշ պտուղներ, սապոնի կտորներ, քանալակի հիւստամներ և նման անվնաս բա-
ներ՝ կանխորոշուելով)։

Խանդարապաններ. — Սիրկաներ... լակոտներ... անձամթոյնը, գուրս կորէք։

Մահմուդ (այլապէս անկանխապէս վերջը՝ տես-
նելով գետնին վրայ իր գլխուն նետաւած իրեղեցները՝ կը սկսի գաւազանին ծայրով

ժողովն ու զամբիտըր նետել։ Այդ միջոցին՝ իբր հետունին խորհրդատուր ձայնով մը խօսեցաւ իր պատկառելի տեղին կ'ըսէ։

Քեմալ. — Մահտի, Մահտի... մահը մօտեցեր է. դու քանի մ'օրէն պիտի մեռնիս... որուն համար ժողովեցիր ոսկիներդ, որուն համար գնեցիր տուններդ... ինծի համար. չնորակալ եմ. այո՛, ես պիտի մտնեմ այն ոսկիները՝ որ գիտեմ թէ ուր պահեր ես. ես պիտի նստիմ այն տուններուն մէջ, երբ դուն, յիմար Մահտի, ափ մը հող պիտի դառնաս՝ փոսի մը մէջ փտելով... խելառ Մահտի, զքեզ ծաղրող լազկոտներէն շատ աւելի խելառ... (Մահտի՛ որ նախ զարմացած ու վախցած ձայնիկ մտիկ կ'ընէր՝ կը կատարէ և կը դիմէ դէպ ի ձայնն եկած կողմը, և միևնույն ժամանակ իրեն խառնութիւն նստէր կ'անցնէ խօսողը փնտռելու՝ Քեմալ արագաշարժաւ կը կտրէ տեսարանը և կ'անցնէ դիմացի խառնութիւն կռակար, և երբ Մահտի տեսարանը կը մտնէ՝ Քեմալ պառհուրտաւ հակառակ կողմէն՝ խորհրդաւոր ձայնով ֆ'ըսէ)։

Քեմալ. — Խեղճ Մահտի, որչափ կը ցաւիմ վրագ. զուր տեղ ճինը մը, ոգիի մը, ճիւղի մը դէմ կը բարկանաս (Մահտի սարսափած մտիկ կ'ընէ)... անիկայ ամէն տեղ է, ամէն կողմէ քեզի կը խօսի. դուն գինըդ չես կրնար տեսնել, չես կրնար հարուածել. անիկայ օդի պէս է, անիկայ պէս է, տեղէ տեղ այժ քանալ գոցելու մէջ կը փոխուի... Եղկելի՛ Մահտի, մտածէ՛ մէյ մը թէ ինչ չարատանք կ'անք անցուցիր՝ ոսկիներդ ժողովելու համար. անարգունեցար ամէնէն՝ իբրեւ զգուելի ազաւ մը. ոչ հազածդ հազուստ է, ոչ կերածդ կերակուր. գինըդ ցորեկ ոսկիներուդ հարստութիւններուդ մտմտութենէ զքեզ մաշեցուցիր, հազար ու մէկ կերպով կ'անքի վայելքներէն զքեզ զրկեցիր... հազարներ, հարիւր հազարներ ժողովեցիր և դեռ գո՛չ չես, երջանիկ չես... Խելառ Մահտի, ոսկին զքեզ երբեք երջանիկ պիտի չընէ. դուն քաղցած շան մը պէս պիտի սատկիս անոնց քով և դիզածներդ ուրիշը պիտի վայելէ և խնթութեանդ վրայ պիտի խնայի. ես, ես պիտի փայտեմ և ըսեմ. Ջզուելի՛ Մահտի, լաւ որ յիմար իշու պէս ապրեցար, յիմար իշու պէս ալ սատկեցար, և ահա ես կը վայելեմ ոսկիներդ, ես, ես՝ որ գիտեմ թէ զանոնք ուր պահեր ես... (Մահտի նետգնետի քայլերուն լուր կը չարձկի մեղեգիկ դէպ ի ձայնն եկած կողմը. դարձեալ առաջուան շարժումներէ՝ և Քեմալ հակառակ կողմը կ'անցնէ իր պառհուրտի, և երբ Մահտի տեսարանը կը մտնէ՝ նոյնպէս կը շարունակէ)։

Քեմալ. — Մահտի, Մահտի... կ'ըսեմ դարձեալ, զուր տեղ ճինը հալածել կ'ուզես. անիկայ օդին մէջէն, զխուզ վերեւէն, ոտքիդ տակի գետնէն, աշուձախ դիէզ անտեսանելի քեզի կը խօսի (Մահտի սարսափած մտիկ կ'ընէ)... Խեղճ Մահտի. որչափ վրագ կը մտքեամ... Ինչ պատասխան պիտի տաս Աւանին՝ որ զքեզ քանի մ'օրէն պիտի դատի. ժողովեցիր ոսկիներդ ու երջանիկ լլլաւ, բայց անոնցմով դուն զքեզ ձէնելդի վայելքներէն զրկեցիր, ու ձէնելմի մէջ կրելիք տանելաքներդ աւելցուցիր. որովհետեւ ծառաներդ վարձքէ զրկեցիր, գնածներդ չվճարեցիր, ուրիշներէն զողջար և անմեղ տղոց ալ զողնալու կերպերը տուրեցուցիր. գու՛թ չունեցար քեզմէ կողոպտուածին թշուառութեան և լացին վրայ, խնտացիր քեզի բարի խրատ տուողին խօսքերուն վրայ, անօթիին բերնի վերջին պատառը խելցիր իւրացուցիր, մերկին միակ շապիկն ալ ուսէն քաշեցիր հանեցիր. քեզի հաւատացող միամիտները խաբարբեցին, խղճ չունեցար, ամէն կրօնական զգացում ոտքի տակ առիր, Աստուծոյ չվճարեցար, մի միայն հարստութիւն դիզելու, ոսկի ոսկիի վրայ եղնելու համար... Զիմար, քանի մ'օրէն պիտի մեռնիս կ'ըսեմ քեզի. դիմալդ անխաղ պիտի մնայ՝ ազառաներուն կտցելու նիւթ, (ոսկորներդ ալ մկները պիտի կրծեն, փորդաւորներդ մէջ որդիւրդ պիտի գետնէն, մինչդեռ հողիդ գոթերի դեները պիտի չարչրկեն... իսկ ժողոված ու պահած ոսկիներդ՝ անոնք ան ալս վայրկենիս կը յափշտակուին կը տարուին ճիններէն, որ ամէն պահուած բանն, ըսու տեղերը լաւ գիտեն... այս վայրկենիս ահա ես ալ հոն կ'ըրթամ՝ մինչդեռ դուն հոս զուր տեղ կը մոլեզնիս կը կատարես ըսածնեւ, ըսու համար. հոն ճիները արդէն կը հաւաքուին հետգնետէ և պահած ոսկիներուդ չորս կողմը պար պարելով՝ եթէ դուն Մահտի չուտով հոն չհասնիս չազատես՝ ճիններն ոսկիներդ պիտի ժողովեն տանին...

Մահտի (աշայտած, ինքիբով դուրս ելած). — Ոսկիներս պիտի տանին... վազեմ, թող հոգիս ալ մէկտեղ տանին. հասնիմ պահած տեղս, փակչիմ ոսկիներուս, ոսկիներուս, ոսկիներուս (դուրս դիմելով գահավիտարար)։ Քեմալ ոչ չակտաներ (նկար կը խառնեն խրճատայնէն մարելով). — Հա՛, հա՛, հա՛... Խառնարարներդ (խառնարներուն մէջ)... Հա՛, հա՛, հա՛...

(Վարագոյրը կ'իջնէ)

(Շարայարելի)

Հ. Ա. ՏԻՌԵՍԵԱՆ

